

Սրմագէշեան 10 ռ. Գասպար Սալդիկեան 3 ռ. Պաղդասար Պալինեան 10 ռ. Վարդերէս Լիւծիեան 10 ռ. Յովհաննէս 2որայեան 1 ռ. Յարութիւն Բազալեան 3 ռ. Գրիգոր Բօնամարեան 5 ռ. Գաբրիէլ Խուզեղեան 1 ռ. Սարգիս Տօնիկեան 5 ռ. Սերովբ Մորգածեան 3 ռ. Յովհաննէս Նազերեան 3 ռ. Գաբրիէլ Քէքեճեան 5 ռ. Յովհաննէս Տէր Օվանեսեան 3 ռ. Կարապետ Պախշատեան 3 ռ. Վուկաս Միսսերեան 2 ռ. Կյրի Գեղեցիկ Փոփովեան 10 ռ. Կարապետ Գաբալնեցիեան 5 ռ. Սարգիս Խոճիեան 5 ռ. Միքայէլ 2արլիսեան 3 ռ. Կարապետ 2ախրրեան 15 ռ. Ասմատուր Ասմատուրեան 3 ռ. Գաբրիէլ Ասմայեան 3 ռ. Քերոր 2երնիշեան 5 ռ. Ասմատուր Խնդեմիրեան 3 ռ. Վարդուհի Պետրոսեան 10 ռ. Մինաս Պետրոսեան 15 ռ. Թէոփորոս Ասկերշեան 2 ռ. Աւետիք Թեպրակեան 3 ռ. Խաչատուր 2այլախեան 5 ռ. Մկրտիչ 2երնովեան 3 ռ. Ստեփաննոս Կելեղեան 1 ռ. Խաչատուր Լիւծիեան 1 ռ. Սերովբէ Բէշէքերեան 3 ռ. Դանիէլ Նալպագճեան 3 ռ. Եղիա 2ապրաստեան 2 ռ. Գէորգ Խազեղեան 1 ռ. Մկրտիչ Արխատելեան 2 ռ. Ստեփաննոս 2որչովեան 1 ռ. Պետրոս Պոստանճեան 2 ռ. Եղիազար Կորոզլինեան 5 ռ. Յովակիմ Գալմեկեան 10 ռ. Կարապետ Թիւլպէնճեան 5 ռ. Գէորգ Թիւլպէնճեան 3 ռ. Մարիամ Թիւլպէնճեան 3 ռ. Պետրոս 2ուպուխճեան 2 ռ. Գրիգոր Թիւլպէնճեան 3 ռ. Կարապետ Թաշիեան 5 ռ. Թաթեմ Թաթեմեան 2 ռ. Գրիգոր Յովհաննէսեան 5 ռ. Աննա Մաղտեսեան 1 ռ. Գէորգ Աղաջանեան 1 ռ.

(Երբեք-Երբեք)

Ժողովարարք { Ղազարոս Զահանայ Յակովբեանց
Երեսփոխան Կարապետ Սուխիմեզեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ամսոյս 10ին Կաթուղիկէ Ս. Էջմիածնի տօնը վայելուէ Հանդիսով տօնուեց, Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, Ս. Պատարագից առաջ, 9 ժամին Ժողովրդեան խումբն բազմութեամբ Մայր Աթոռոյս զանգակատան առաջ, արեւմտեան մեծ դրան Հանդէպ կատարուեց յատկացեալ մաղթանքը, Ս. Պատարագից յետոյ Վաղարշապատու Հասարակութեան առաջաւոր անձինք և զանազան զիւանատանց աստիճանաւորները միաբանութեանս հետ ճաշեցին Մայր Աթոռոյս սեղանատանը:

Ամենապատիւ Տեղակալ Տ. Մակար Սրբազան Արքեպիսկոպոս տկարութեան պատճառով, բժշկի խորհրդով ամսոյս 14ին առաւօտեան 7 ժամին ուղևորեց զէպի իւր վիճակը կազդուրուելու համար, որով և մինչև քվեբաղարձ Նորին Ամենապատիւ Սրբազնութեան՝ ըստ օրինի, իրրև

աւագագոյն Սինօդի անդամոց՝ Սինօդի Ատենայետի Տեղակալի պաշտօնը պէտք է վարէ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս:

Վաղարշապատի օրիորդական Հոգ. դպրոցի Խնամակալուհին ուղարկելով խմբագրութեանս հետեւեալ նուիրատուաց ցուցակը, խորին շնորհակալութիւն եւ յայտնում նուիրատուաց, որք են.

Թադէոս Եպիսկոպոս Կառավարիչ Շամախու Հայոց Թեմի.	10
Գրիգոր Արքեպիսկոպոս Սաղինեանց.	10
Ատենադպ. Կոնսիստ. Ղարաբաղու Իսակ Լազարեան	3
Սուքիաս Եպիսկոպոս.	25
Յովհաննէս Գրիգորեան Սարգսեանց.	10
Ուսումնասէր ռմն.	2
Ռմն յազգայնոց.	3
Համազասպ Վարդապետ	5
Սոնա եւ Մարիամ Համազասպեանց	2
Սեդրակ Մանգինեանց ի յիշատակ վաղամեռիկ միամեայ Աւետիս որդւոյ իւրոյ	25
Ստեփաննոս Տէր Ստեփաննոսեան	1
Խորէն Ծ. Վարդապետ Ստեփանէ	3
Յովհաննէս Վարդապետ Շիրակունի	5
Յարութիւն Մխիթարեան	5
Ես	4

Գումար 113

Աստուած ի հաճոյս իւր ընդունէ եւ վարձատրէ նուիրատուաց աստ եւ ի հանդերձելումն ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ:

Պ. Սեդրակ Մանգինեան ի յիշատակ միամեայ վաղամեռիկ որդւոյ իւրոյ Աւետիս նուիրած լինելով Վաղարշապատի երկսեռ դպրոցներին իւրաքանչիւրին 25ական թուրքի, Տղայոց դպրոցի Հոգաբարձութիւնն ու Օրիորդաց դպրոցի Տիկին Խնամակալը յայտնումն խորին շնորհակալութիւն, աղօթելով որ Հոգին Սուրբ մխիթարէ վշտագնեալ ծնողաց սրտերը:

Վաւերից Պ. Գրասէրը ի միջի պլնոց գրումէ. «Այս օրերս Անգ. հիւպատոս Պ. Էյրս հեռացաւ քանի մ' ամիս արձակուրդով Անգղիա ուղևորելու համար. Քանի մ' օր ետք Ռուսիոյ դեր հիւպատոս Պ. Կամսարական մեր մէջ լինել կը յուսամք»:

4. Պօլսում հրատարակուող «Բուրաստան Մանկանց» մանկավարժական թերթի հետ ստացանք այս տարի Ձմիւռնիայում տպուած «Տեղեկագիր յանձնաժողովոյ վերաշինութեան ազգային Ս. Հռիփս. վարժարանին Ձմիւռնիոյ առ պատկառելի երեսփոխանական ժողով գաւառիս» փերնագրով տետրակը, Նիից և մոից ընդհանուր հաշուեկշռից երևումէ որ շինութեան մուտքն ու ծախքը եղել է լիրա 3869, 772. 14, որից 569 լիր 8 772. պարտք:

Ժամանակաւոր ընդհատումից յետոյ սկսուեց հրատարակուել Ձմիւռնիայում Արշալոյս Արարատեան լրագիրը և ստացանք արդէն մի քանի համարները: Լրագրի բաժանորդագինն է Տաճկաստանից դուրս 25 ֆր. Հասցէն Ձմիւռնիա, Սէլվի խան թիւ 17:

Ստացանք Մանկավարժանոց ամսագիր № 3, Առողջապահական թերթ № № 4 և 5 մի տետրակի մէջ ամփոփած, 4. Պօլսում հրատարակուող Բուրաստան Մանկանց մանկավարժական հանդիսի հատոր Գ. տետր 10. և Աղբիւր № № 5 և 6 մի տետրակով:

Մանկավարժանոցի Խմբագիրը ստացած լինելով Մխիթար Գօշի դասաստանագիրը Հայոց Հանգուցեալ Աւահան Ծ. վարդապետ Բաստամանի, իւր թերթի 3 համարում գրումէ «Հանգուցեալ վարդապետի այս երկասիրութիւնը հարուստ ընծայէ հայ օրէնսգէտներին և հայ աղքատ իրաւագիտական գրականութեանը, Տպւած է Էջմիածնի տպարանում, գինը 3 ման. է նշանակուած, շատ թանկ»:

Ամենայն հրատարակող այն հաշիւը պէտք է ունենայ ի նկատի, որ եթէ տպագրուած գիրքը վաստակ չըբերէ, գոնէ վնասի ևս չենթարկէ իրան, թողնենք որ յիշեալ գիրքը իւր ծաւալով և տպագրութեան դժուարութեամբ արժանի էր 3 բուբլու: Գիրքը լինելով մասնագիտական մի գործ՝ մասնագէտներին միայն կարող է հետաքրքրել և ուրիմն և մասնագէտներն մեծ մասամբ պէտք է գնեն, իսկ այդպիսեաց թիւը մեր մէջ շատ չէ, հետեւարար մնումէր այնպիսի գին նշանակել, որ ծախուածի գինը կարող լինէր ծածկել գոնէ տպագրութեան ծախքը, Տեսնենք ծախուածը այն քանակութեան կըհասնի՞ որ ծածկէ ծախքը: